ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 25-27-ը Եթովպիայի Ուղղափառ Թևահեդո Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Աբբա Պաուլոսի հրավերով Ադիս Աբեբայում տեղի ունեցավ Եթովպիայի Հազարամյակի գագաթաժողովը, որին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մասնակցեցին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանը և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը:

Գագաթաժողովի ընթացքում Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանն ընթերցեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ ուղղված ժողովականներին:

Գագաթաժողովի ընթացքում քննարկումներ տեղի ունեցան աշխարհի արդի մարտահրավերների, խաղաղության հաստատման, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի շուրջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ